ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/46392-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-281-13.09.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարու-թյան առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1425 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Սահակյան

Հեռ. 010515826

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-281-13.09.2019-ՊԻ -011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով Ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 116-րդ հոդվածում նախատեսվում են նոր կարգավորումներ, որոնց համաձայն՝ որդեգրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով որպես երեխա որդեգրել ցանկացող հաշվառված չափահաս անձը, որը մասնակցել է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված նախապատրաստական դասընթացներին, բացառությամբ այն անձանց, ովքեր ամուսնացած են նույն սեռի ներկայացուցիչների հետ՝ նման ամուսնություն թույլատրող պետության օրենսդրությանը համապատասխան և սեռը փոխած անձի:

Անդրադառնալով նախագծով նախատեսվող այն կարգավորմանը, որի համաձայն՝ նույն սեռի ներկայացուցիչները, որոնք ամուսնացել են նման ամուսնություն թույլատրող պետության օրենսդրությանը համապատասխան որդեգրելու իրավունք չունեն, ներկայացնում ենք հետևյալ նկատառումները.

Օրենսգրքի՝ երեխային որդեգրելու կարգը սահմանող 113-րդ հոդվածի համաձայն՝ որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով որպես երեխա որդեգրել ցանկացող հաշվառված չափահաս անձը:

Երեխային որդեգրելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամուսնացած լինելու պարտադիր պահանջ ամրագրված չէ: Այսինքն՝ ստացվում է, որ երեխա որդեգրելու իրավունք ունի յուրաքանչյուր չափահաս անձ՝ անկախ ամուսնացած լինելու հանգամանքից, ով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Այս առումով նախագծով նախատեսված հիշյալ կարգավորումներն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝ արդյո՞ք ներկայացվել է համատեղ դիմում այնպիսի անձանց կողմից, ովքեր ամուսնացած

են նույն սեռի ներկայացուցիչների հետ՝ նման ամուսնություն թույլատրող պետության օրենսդրությանը համապատասխան, թե՞ նման անձանցից մեկի կողմից:

Այն դեպքում, երբ որդեգրման դիմումը ներկայացվում է ամուսինների կողմից համատեղ, ապա նախ որդեգրելու համար անձինք պետք է հաշվառվեն որպես որդեգրել ցանկացող անձ: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 114-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ ամուսնության մեջ գտնվող անձանցից յուրաքանչյուրը պարտավոր է հաշվառվել որպես որդեգրող:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը ...»: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 152-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերը չեն կիրառվում այն դեպքում, եթե նման կիրառումը հակասում է Հայաստանի Հանրապետության իրավակարգին (հանրային կարգին): Այդ դեպքում կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը սահմանադրորեն ամրագրել է կամքի ինքնավարության հիման վրա տղամարդու և կնոջ միմյանց հետ ամուսնության իրավունքը, հետևաբար Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող, ամուսնության մեջ գտնվող նույն սեռի օտարերկրացիների և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դիմումը՝ որպես որդեգրել ցանկացող անձինք հաշվառվելու մասին, դեռևս հաշվառման փուլում կմերժվի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգին համապատասխան, քանի որ վերջիններս Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով ամուսիններ համարվել չեն կարող:

Հետևաբար Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունն արդեն իսկ բացառում է նույն սեռի ներկայացուցչի հետ ամուսնացած անձանց կողմից երեխային համատեղ որդեգրելու հնարավորությունը, ուստի նախագծի ընդունման անհրաժեշտությունը սույն մասով բացակայում է:

Նախագծի մյուս կարգավորումները վերաբերում են այն դեպքերին, երբ որդեգրման դիմում ներկայացվում է նույն սեռի ներկայացուցչի հետ ամուսնության մեջ գտնվող անձի կողմից միանձնյա (ոչ համատեղ), ինչպես նաև սեռը փոխված անձի կողմից:

Այս դեպքում հարկ ենք համարում նշել, որ ինչպես «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիան, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշումը նախատեսում են օտարերկրացիների կողմից երեխաների որդեգրման բարդեցված ընթացակարգ, որի ընթացքում վեր է հանվում երեխայի լավագույն շահը: Ընդ որում, կարևոր է նաև այն հանգամանքը, որ երեխայի որդեգրումն իրականացվում է դատական կարգով, որտեղ նույնպես դատարանի կողմից գնահատվում է որդեգրումը երեխայի շահերից բխելը:

Հետևաբար, գտնում ենք, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ամբողջովին վերանայվում է երեխայի պաշտպանության համակարգը, որի շրջանակներում մշակվում է նաև որդեգրման գործընթացի բարեփոխման հայեցակարգը: Նշված հարցերը նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 26-ի N 1197-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի օրակարգում են:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ նախագիծը ներկայացված տարբերակով ընդունելու նախաձեռնությունից՝ ելնելով վերոշարադրյալ հիմնավորումներից:

Պ-281-13.09.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ընտանեկան օրենսգիրքի 116-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ «ժ» և «ի» ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ ՝

«ժ) այն անձանց, ովքեր ամուսնացած են նույն սեռի ներկայացուցիչների հետ՝ նման ամուսնություն թույլատրող պետության օրենսդրությանը համապատասխան.

ի) սեռը փոխած անձի »:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընտանիքի դերն ու նշանակությունը բացառիկ է Հայ ժողովրդի գոյապահպանման գործում: Այն ոչ միայն մարդկային ցեղի բնական վերարտադրության հիմնական միջավայրն է, այլև հատուկ ընկալում ունի Հայի արժեհամակարգում: Այս պնդումն ամրագրված է ամենից առաջ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են»:

Ավանդական բնական ընտանեկան մոդելը մեկ տղամարդու և մեկ կնոջ միությունն է, որի հիմնական գործառույթներից մեկը մարդկության վերարտադրությունն է: Ընտանիքի դերը մեծ է երեխաների սոցիալականագման և առողջ մտածողության զարգացման գործում, և այդ զարգացումն է, որ ապահովում է պետության առաջընթացը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանվում են պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնցից երկուսը վերաբերում են երեխաներին: Հիմնական օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝

«Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

5) ծնելիության և բազմազավակության խթանումը.

6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.»:

Սույն հոդվածում ամրագրելով վերոնշյալ երկու կետերը՝ պետությունը հիշյալ նպատակներին հասնելու համար պետք է ստեղծի պայմաններ, որոնք կարող են ապահովել այդ նպատակների իրագործումը:

Այսպիսի նպատակ է ամրագրում նաև ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), որի նախաբանում նշվում է, որ «ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում»:

Երեխայի առողջությունն ընդգրկում է նրա ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան վիճակը: Ինչպես նշվում է Կոնվենցիայի նախաբանում, պետությունը պետք է ապահովի

երեխայի աճի ու բարեկեցության բնական միջավայրը: Ուսումնասիրելով մի շարք գիտնական-հոգեբանների աշխատություններ և հետազոտություններ պարզ է դառնում, որ երեխան իրեն լիարժեք և հոգեպես ուժեղ է զգում բնական և առողջ ընտանիքում, որտեղ ամբողջական բնույթ ունի «ընտանիք» կատեգորիան:

Ընտանիքն ամբողջական է, երբ այնտեղ ապրում են երկու ծնողներ՝ հայր և մայր, որոնցից յուրաքանչյուրը Հայ ընտանիքում իրենց առանձնահատուկ դերն ունի: Մանկատան պատերի ներսում կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխան չի կարող իրեն լիարժեք և առողջ զգալ մի միջավայրում, որտեղ չի հասկանա թե ով է իր մայրը, և ով՝ հայրը:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «2. Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը: »:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, լինելով Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կրող կողմ, պարտավոր է ապահովել նրանում առկա դրույթների իրագործումը և ինչպես նշվում է Կոնվենցիայի 4-րդ հոդվածում, «մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ սույն Կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար», անհրաժեշտ բոլոր միջոցներով նպաստել առողջ սերնդի ձևավորմանը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ «մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն:»: Հռչակագիրը, ինչպես երևում է, հատուկ առանձնացնում է մայր և մանուկ եզրույթները, պատճառը նրանում է, որ երեխան և մայրը ավելի ուժեղ կապով են միմյանց կապվում, և անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե ինչպես կարող է երեխան ապրել նույն սեռի ամուսինների հետ: Նման ոչ լիարժեքության մեջ ապրելով՝ երեխաները կարող են ձեռք բերել հոգեկան խանգարումներ՝ չկարողակալով արտահայտել իրենց ներքին զգացմունքները: ՀԱՅ հասարակության մեջ այդ երևույթն ավելի խոցելի կդառնա, քանի որ մեր պատմությանը հետադարձ հայացք գցելով՝ չենք կարող նմանօրինակ ընտանիքների հանդիպել:

Անդրադառնալով ներպետական օրենսդրությանը՝ հարկ է ուշադրության արժանացնել «Երեխայի իրավունքների մասին» 1996թվ. մայիսի 29-ի ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքի 1-ին հոդվածի համաձայն «Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: »: Այս սկզբունքներով առաջնորդվելով՝ պետությունը երեխայի նկատմամբ ցանկացած գործողության կատարման մոտեցել է առանձնահատուկ նրբությամբ, այդ թվում նաև որդեգրմանը՝ որդեգրման համար սահմանելով բավականին բարդ ընթացակարգ և հսկողություն: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:»: Այս իրավունքի իրագործումը ապահովելու նպատակով պետությունը պետք է իր իրավասության շրջանակներում ձեռնարկի միջոցներ, ընդունի օրենքներ, որպեսզի թույլ չտա երեխայի առողջ զարգացմանը խոչընդոտող որևէ գործողություն:

Միջազգային պրակտիկայում նման կարգավորում է հանդիպում Ռուսաստանի Դաշնության Ընտանեկան օրենսգրքում, որը նույնպես արգելում է որդեգրումը միասեռ ամուսինների կողմից:

Նախագծով ակնկալվում է ապահովել սահմանադրությամբ պետության քաղաքականության նպատակների իրականացումը, ինչպես նաև ապահովել երեխայի՝ միջազգային իրավական ակտերով սահմանված իրավունների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հոկտեմբերի 2019 թվականի N 1425 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-281-13.09.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 8
Երևան